**ՔԱՂՎԱԾՔ**

**«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»**
**պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝**
**2023 թվականի մայիսի 31-ի, ժամը 14:00-ի նիստի**
**N 7 արձանագրությունից**

**ԼՍԵՑԻՆ.-** Լեզուների ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Գայանե Հակոբի Հովհաննիսյանի «Практикум по деловому письму»** ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը:

Զեկուցող՝ գիտության գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Թ.Մ.Մկրտչյան**:

Զեկուցողը նշեց. հրատարակության ներկայացված ուսումնամեթոդական ձեռնարկը նպատակաուղղված է ուսանողների գործարար նամակագրության հմտությունների զարգացմանը, մասնագիտական տերմինների յուրացմանը, ինչպես նաև ռուսերենի տեսական և պրակտիկ գիտելիքների համակարգմանը: Այն ներառում է 10 թեմա (բաժին)՝ փաստաթուղթ, գործնական նամակ, ռեզյումե, ինքնակենսագրություն, ռեզյումեին ուղեկցող նամակ, դիմում, բացատրագիր, անդորրագիր, լիազորագիր, էլեկտրոնային փաստաթղթեր: Յուրաքանչյուր թեմա բաղկացած է հետևյալ մասերից՝ համառոտ տեղեկատվություն փաստաթղթի մասին, գործարար նամակի կառուցվածք, կազմման առանձնահատկություններ, նմուշային փաստաթղթեր, քերականական մեկնաբանություն, բառապաշար և խոսքի մշակույթ, գործնական առաջադրանքներ և «Իսկ դու գիտե՞ս, որ ...» բաժինը: Ձեռնարկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում գործնական նամակ գրելու բառապաշարային և քերականական նորմերին ու գործնական նամակագրության սկզբունքներին: «Իսկ դու գիտե՞ս, որ ...» բաժնում տրամադրվում է հետաքրքիր տեղեկատվություն ռուսական բիզնես հաղորդակցությունների պատմության մասին: Ձեռնարկի հավելվածում ներառված են հայերեն տառերի ռուսերեն տառադարձման սկզբունքները, հայկական ազգանունների համառոտ բառարան-տեղեկատու և դրանց ռուսերեն տառադարձումը, կառույցների, վարչատարածքային միավորների, պաշտոնների անվանումները գրելու կանոնները, գրասենյակային աշխատանքում ընդունված հապավումների ցանկը:

Ուսումնամեթոդական ձեռնարկի վերաբերյալ ստացվել է 4 դրական կարծիք.

1. Ե.Վ.Կուպչիկ՝ Տյումենի պետական համալսարանի ռուսաց լեզվի և ընդհանուր լեզվագիտության ամբիոնի պրոֆեսոր, բանասիրական գիտությունների դոկտոր:

2. Տ.Ն.Ռացեն՝ Տյումենի պետական համալսարանի ռուսաց լեզվի և ընդհանուր լեզվագիտության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների թեկնածու:

3. Ա.Ե.Մկրտչյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու:

3. Ռ.Ռ.Սարգսյան՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի լեզուների ամբիոնի դոցենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու:

Բոլոր կարծիքներում նշվում է, որ ներկայացված ուսումնամեթոդական ձեռնարկը համապատասխանում է «Ռուսաց լեզու» դասընթացի ծրագրին և նախատեսված է համալսարանի բոլոր մասնագիտությունների բակալավրիատի առաջին կուրսի ուսանողների համար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.-** Հիմք ընդունելով գրախոսների դրական կարծիքները, լեզուների ամբիոնի և գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողովի նիստերի որոշումները՝ լեզուների ամբիոնի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու **Գայանե Հակոբի Հովհաննիսյանի «Практикум по деловому письму»** ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության, 200 օրինակ տպաքանակով, «Տնտեսագետ» հրատարակչությունում (նախատեսված է հրատարակչական պլանով): Որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 51, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

**Գիտական խորհրդի նախագահ՝** **Դ. Գալոյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝** **Ն. Դարբինյան**

2023 թ. մայիսի 31
Երևան